ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՄՆ-ԴՇ-20/04

ք. Երևան «22» «հունվարի» 2020թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ **Վ.Ջիլավյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրեն **Ս.Աղաջանյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում»** ծրագրային միջոցառման՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 1155, միջոցառում 11005 («Դիլիջան» ազգային պարկի տարածքում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **164 366 300 (մեկ հարյուր վաթսունչորս միլիոն երեք հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով: Պայմանագրի գինը ներառում է ԱԱՀ-ի գումարը:

1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված №1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում. եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագրի Հավելված №2-ով հաստատված, տվյալ եռամսակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:

4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները

ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է Պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահամանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի Պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

4.3. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագրի պայմանները տարածվում են 2020 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գ ործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված №2) հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Եթե տրամադրվող դրամաշնորհով նախատեսված ծրագիրը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2020 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

8.4. Կազմակերպությունը մինչև 2021 թվականի հունվարի 31-ը պետական մարմին են ներկայացնում տեղեկատվություն 2020 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ստացված դրամաշնորհի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական բյուջե վերադարձված գումարների վերաբերյալ:

8.5. Պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Պայմանագրի Հավելվածներ №№1-ը և 2-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Դիլիջան, Թբիլիսյան խճուղի 2
ՖՆ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007797	ՀՀ 900018003856
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 07610657
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Վ.Ջիլավյան	**Ս.Աղաջանյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված № 1
«22» «հունվարի» 2020թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-20/04 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի ժ/պ
Վ.Ջիլավյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Ա.Աղաջանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN հ/հ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	«Դիլիջան» ԱՊ պահպանություն	- Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բամազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն /պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա): Մարդու գործունեության հետևանքով ազգային պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա)	- Պահպանության միջոցառումների անցկացում՝ ազգային պարկի աշխատակիցների կողմից տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով:	Պատշաճ պահպանության ապահովում, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում, հաշվետվություններ, վերլուծություններ և քննարկումներ Դիլիջան համայնքի բնակչության համար	31.12.2020թ.	**143 630 300**
		- Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ազգային պարկի տարածքների պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը:	- Հրդեհների կանխարգելում:			
		- Հարող բնակավայրերի բնակչության շրջանում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:	- էկոլոգիական իրազեկության և էկոդաստիարակության նպատակով հարող բնակավայրերի բնակչության հետ հանդիպումների կազմակերպում:			

2	«Դիլիջան» ԱՊ գիտական ռաումնասիրություններ	«Դիլիջան» ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի, բնության ժառանգության ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի միջոցառումների իրականացում: Դիտական միջոցառումների հաշվետվությունների թիվը 1 (մեկ), ռեկրեացիոն միջոցառումների հաշվետվությունների թիվը 2 (երկու):	Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալների ձեռք բերում, ուսումնասիրությունների իրականացում	Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալների վերլուծությունների առկայություն	31.12.2020թ.	**20 736 000**
	1. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և «ՄայՖորեսթ.Էյէմ» ՀԿ-ի համագործակցության շրջանակներում անտառվերականգնման, անտառպատման աշխատանքների կազմակերպում	- Բնական վերաճի օժանդակում՝ ցանկապատում, հանքայնացում և այլն	- Անտառվերականգնման և անտառպատման աշխատանքների կազմակերպում՝ նախապես համաձայնեցված հատվածներում:	- Անտառվերականգնում և անտառպատում	31.12.2020թ.	
	2. ԴԱՊ-ի կենսաբազմազանության բազայի տվյալների, շարունակական հավաքագրման / թարմացման աշխատանքներ	- Կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների հավաքագրում	- ԴԱՊ-ի հինգ տեղամաս-մասնաճյուղերում ֆոտոթակարդների տեղադրում, դիտայցերի և ուսումնասիրությունների իրականացման աշխատանքներ՝ կենսաբազմազանության տեսակային կազմի մոտավոր թվաքանակի, պոպուլացիաների տարածվածության և դրանց փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն ունենալու նպատակով:	- Բազայում կենսաբազմազա-նության և դրանց փոփոխություն-ների վերաբերյալ տեղեկատվություն	31.12.2020թ.	
	3. «Դիլիջան» ազգային պարկի տարածքում այծյամների և արջերի գլխաքանակի մոնիթորինգ	- Մոնիթորինգի իրականացում թիրախային տեսակների ապրելավայրերի, թվաքանակի և տեղաշարժման առանձնահատկությունների վերաբերյալ	- ԴԱՊ-ի անտառապահների կողմից նախապես նշված արահետներում ֆոտոխցիկների տեղադրում, ինչպես նաև դաշտային ուսումնասիրությունների իրականացում	- Թիրախային տեսակների գլխաքանակի ապրելավայրերի, թվաքանակի և տեղաշարժման վերաբերյալ հստակ տեղեկատվություն	31.12.2020թ.	
	4. «Դիլիջան» ազգային պարկի տարածքին բնորոշ ներկատու բուսատեսակների տեսակային կազմի և աճելավայրերի ուսումնասիրություն	- Դիտայցերի, ուսումնասիրությունների կազմակերպում և իրականացում: Ներկատու բույսերի նմուշների հավաքման աշխատանքներ	- Ազգային պարկի բոլոր տեղամաս-մասնաճյուղերում շրջայցերի և դիտարկումների իրականացում, ուսումնասիրություններ՝ ներկատու բույսերի տեսակային կազմի, պոպուլյացիաների, դրանց տարածվածության և առանձնահատկությունների վերաբերյալ	- Ներկատու բույսերի տեսակային կազմի, պոպուլյացաների, դրանց տարածվածության և առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում	31.12.2020թ.	
	5. Քաղցրահամ ջրային	- Ջրային էկոհամակարգերի	- Ազգային պարկի ջրային	- Ջրի որակի գնահատում	31.12.2020թ.	

	էկոհամակարգերի մոնիթորինգ՝ Աղստև և Շտողան գետերի վիճակի վերաբերյալ	ուսումնասիրությունների իրականացում, գետերի ջրերի որակի, հնարավոր ախտոտվածության գնահատում	էկոհամակարգերի ներկա վիճակի և դրանց աղտոտվածության աստիճանի, որոշման նպատակով տեղամաս-մասնաճյուղերում ուսումնասիրություններիիրականացում			
	6. ԴԱՊ-ի չվող թռչնատեսակների վարքագծի, տարածվածության և տեղաշարժերի դիտարկում	- Աշխատանքային ծրագրի մշակում, դիտայցերի և շրջայցերի կազմակերպում:	- Չվող թռչնատեսակների բնադրավայրերի, տեղաբաշխվածության, վարքագծի, վերադարձի, չուի ժամկետների, ինչպես նաև կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցության դիտարկում և շրջայցերի կազմակերպում	- ԴԱՊ-ի չվող թռչնատեսակների վարքագծի, տարածվածության և տեղաշարժերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և հետագա մոնիթորինգի իրականացում	31.12.2020թ.	
	7. Կրթական, ճանաչողական, ուշադրության և հիշողության զարգացման համար նախատեսված դասընթաց - սեմինարների կազմակերպում հետևյալ թեմաներով՝ • «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի թռչունների որոշման դասընթաց • Ջուրը կյանք է • Անտառի դերը մեր կյանքում	- Պրեզենտացիաների մշակում, սեմինար-դասընթացների, ինտերակտիվ խաղերի կազմակերպում	- Դասընթացների թեմաների մշակում և համապատասխան պրեզենտացիաների, տեսքով ճանաչողական սեմինար-դասընթացների, դաշտային և ջրի հետ կապված փորձարարական աշխատանքների կազմակերպում	- Մարդ- բնություն փոխհարաբերակցության, դրա կարևորության և հետևանքների վերաբերյալ իմացություն	31.12.2020թ.	
	8. «Զմրուխտե պարկ» էկոակումբի գործունեության իրականացում •	- Էկոակումբի միջոցառումների պլանի մշակում, թափոնների հավաքում, զեկույցների, բաց դասերի անցկացում, նոր անդամների ներգրավում:	- ա) էկոակումբի եռամյակային միջոցառումների պլանի մշակում բ) բնապահպանական զեկույցների, բաց դասերի, միջոցառումների, ցուցահանդեսների, մրցույթների, խաղերի կազմակերպում և իրականացում գ) << այլ համայնքների դպրոցների, սփյուռքահայ և օտարերկրացի հասակակիցների, էկոակումբների, բնապահպանական կենտրոնների հետ կապի հաստատում դ) պարբերաբար նոր անդամների ներգրավում	- Յուրաքանչյուր եռամսյակում մեկօրյա ակցիայի իրականացում, որի ընթացքում հավաքել թափված պլաստիկ շշերը, թղթի թափոնները, պոլիէթիլենային տոպրակները, որի արդյունքում մասնակիցների մոտ կձևավորվի կենցաղային թափոնները տարբերակելու և կրկնակի օգտագործելու սովորույթ: Հայտարարել պաստառների մրցույթ, որի արդյունքում լավագույնները փակցնել համապատասխան տեղերում: Ակումբականների հետ համայնքում իրականացնել հետաքրքրիր	31.12.2020թ.	

				սյուժեներով լուսանկարման և տեսանկարահանման աշխատանքներ, որն էլ կամփոփվի « Աղբի խնդիրը» զեկույցով		
	9. Բնապահպանական միջոցառումներ, ցուցահանդեսներ և դասընթացներ,արշավներ և փոխադարձ այցելություններ	- Ցուցահանդեսների և դասընթացների, արշավների և փոխադարձ այցելությունների կազմակերպում և իրականացում	- **Ցուցահանդես.** ա) «ԴԱՊ-ի թռչունները» - Թռչնի օր /ապրիլի 1/ բ) «Ես և իմ շրջակա միջավայրը» - Շրջակա միջավայրի պաշտպանության համաշխարհային օր / հունիսի 5/ գ) «ԴԱՊ-ի բերքն ու բարը» - Բերքի տոն / հոկտեմբերի 24/ **Դասընթացներ.** ա) «Կենսաբազմաբանության պահպանությունը գյուղական և քաղաքային միջավայրերում» - կենսաբազմազանության միջազգային օր /մայիսի 22,պարբերաբար/ բ) «Միջավայրի աղտոտումը և դրա հետևանքները»-պարբերաբար **Արշավներ.** ա) «Բնության վերամշակողները» -- Թաքնված ջրվեժ բ) «Հայրենի բնությունը, նրա կարևորությունը և բազմազանությունը՝ հայ գրողների ստեղծագործություններում» - Շշնջացող ջրվեժ **Փոխադարձ այցելություններ ուսումնական հաստատություններ** ա) «Եղիր իրազեկված» – Հայ մամուլի օր /հոկտեմբերի 16/ բ) «Ծառ տնկելու կանոնները»- պարբերաբար	- Ուսումնական հաստատությունների /ներառել նաև նախակրթարանները և տարրական դասարանները/, ինչպես նաև ազգաբնակչության հետ պարբերաբար միջոցառումների կազմակերպումը կհանգեցնի իրազեկվածության բարձրացման, որի արդյունքում կձևավորվի հոգատար վերաբերմունք բնության և շրջակա միջավայրի նկատմամբ, կնվազի վնասակար միջոցառումների իրականացումը, կբարձրանա պատասխանատվության զգացումը	31.12.2020թ. 31.12.2020թ.	
	10. Պաստառ - օրացույցների, իրազեկող նյութերի, բրյոշուրների մշակում և տարածում	- Իրազեկող նյութերի տարածում թիրախային խմբերի շրջանում	- ա) Բնակչության շրջանում իրազեկող նյութերի տարածում բ) բուկլետների, գովազդային հոլովակների, հանրամատչելի կրթադաստիարակչական ու տեղեկատվական նյութերի մշակում	- Հասարակության շրջանում ԴԱՊ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածում, որն էլ կնպաստի հասարակության իրազեկվածության բարձրացմանը		
	11. ԴԱՊ-ի կայքի և սոցիալական ցանցերի թարմացում	- Պարբերաբար տեղեկատվական նյութերի և ԴԱՊ-ում իրականացված աշխատանքների լուսանկարում, տեսանկարահանում և հանրայնացում	- ա) www.dnp.am կայքի թարմացում բ) սոցիալական ցանցերի/ Թվիթեր, Ֆեյսբուք, Ինստագրամ/ թարմացում	- ԴԱՊ-ի սոցիալական ցանցերը և կայքը հանդիսանալով նրա ներկայացուցչական և	31.12.2020թ.	

				գովազդային ամենակարևոր գործիքներից մեկը կնպաստեն գործողությունների, միջոցառումների, կրթադաստիարակչական տեղեկատվական նյութերի միջոցով բնապահպանական գիտելիքների, ինչպես նաև այլ տիպի տեղեկատվության տարածմանը:		
	12. «Տրանսկովկասյան արահետ» Զբոսաշրջության Աջակցման ՀԿ-ի հետ համագործակցության ծրագրի շրջանակներում երթուղիներում էկոտուրիստական պարագաների թարմացում-տեղադրում	- Տեղեկատվական ցուցանակների և ուղղորդող նշանների թարմացում, տեղադրում	- Երթուղիներում առկա ցուցանակների և ուղղորդող նշանների թարմացում, անհրաժեշտության դեպքում նորերի տեղադրում	- Էկոտուրիստական ծառայությունների որակի բարձրացում: Զբոսաշրջիկների թվի աճ	31.12.2020թ.	
	13. Տուրիստական կազմակերպությունների և հյուրատների հետ հանդիպումներ՝ հետագա համագործակցության նպատակով	- Հանդիպումների և քննարկումների կազմակերպում	- ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	- Զբոսաշրջիկների թվի ավելացում,հավելյալ ֆինանսական միջոցներ	31.12.2020թ.	
	14. ԴԱՊ-ի էկոերթուղիների գույքագրում	- Գույքագրում	- Շրջայցեր կազմակերպում ԴԱՊ-ի 24 քայլարշավային արահետներում	- Էկոտուրիստական ծառայությունների մակարդակի բարձրացում	31.12.2020թ.	
	15. ԴԱՊ-ի ռեկրեացիոն գոտում այցելուների և կազմակերպվող հանգստի ձևերի վերաբերյալ մոնիթորինգ	- Մոնիթորինգի իրականացում	- Այցելուների թվաքանակի, նախասիրությունների, ԴԱՊ-ի ռեկրեացիոն գոտու առավել ակտիվ հատվածների վերաբերյալ ինֆորմացիայի հավաքագրում	- Էկոտուրիստական ծառայությունների որակի բարելավում	31.12.2020թ.	
	ԸՆԴԱՄԵՆԸ					**164 366 300**

Հավելված № 2
«22» «հունվարի» 2020թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-20/04 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի ժ/պ
Վ.Ջիլավյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Ս.Աղաջանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրի դասիչը՝	*1155*	**Ցուցանիշներ**			
Միջոցառման դասիչը՝	*11005*	**Առաջին եռամսյակ**	**Առաջին կիսամյակ**	**Ինն ամիս**	**Տարի**
Միջոցառման անվանումը՝	*«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների կատարում*				
Նկարագրությունը՝	*«Դիլիջան» ազգային պարկի տարածքում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացում*				
Միջոցառման տեսակը՝	*Ծառայությունների մատուցում*				
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝	*Մասնագիտացված կազմակերպություններ*				
Արդյունքի չափորոշիչներ					
ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանվող տարածք, հա		*33765*	*33765*	*33765*	*33765*
Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ		*1*	*2*	*3*	*4*
Բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների թիվը, հատ		*3*	*6*	*6*	*12*
Խախտված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառումների թիվը, հատ		*0*	*2*	*4*	*6*
Դրամաշնորհային պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման մակարդակը, տոկոս		*0*	*0*	*0*	*100*
Բնական էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործընթացների, այդ թվում՝ որսագողության և ապօրինի ծառահատումների դեմ ուղղված գործողությունների արդյունավետությունը նախորդ տարվա համեմատ, տոկոս		*0*	*0*	*0*	*15*
Էկոհամակարգերի բնականոն զարգացման վրա բնական և մարդածին բացասական ազդեցության կանխարգելման կարողությունը, տոկոս		*0*	*0*	*0*	*60*
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		***32 873.3***	***73 964.8***	***115 056.4***	***164 366.3***